

that direction was noticed in the Soviet Armenia. In 1950 the industrial production raised by 15.6% in comparison with the year 1945. The republic's industrial production raised by 15.6%. High rates of industrial growth were recorded during 1950-1960. Thus, in the period under review, despite the mentioned success there were a number of unsolved problems connected with the material welfare growth of the soviet people. Industry and agriculture were not so effective which was the result of low level of agricultural and industrial products' per capita consumption.

ԼՈՐՈՒՏԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՐՈՒՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱՆՈՑԸ ԵՎ ԲՐՈՒՏԻ ՀԱՍՏՈՑԸ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ
ԳՊՀ պրոֆեսոր

Լռու մարզի Լորուտ գյուղի տարածքում, որը գտնվում է Դսեղ գյուղից 25 կմ հարավ-արևելք, 1970-ական թվականների վերջին քառորդում հայտնաբերել ենք /Վ. Ավետյան/ վաղ բրոնզից /մ.թ.ա. IV հազ./ մինչև զարգացած միջնադար ընկած ժամանակաշրջանի հարուստ, շարունակական զարգացմամբ մշակույթ: Այնտեղ կան առանձնատիպեր, որոնք առաջին անգամ են հայտնաբերվում Հայկական լեռնաշխարհում և ընդհանրապես Անդրկովկասում:

Նշված առանձնատիպերի շարքին են դասվում հնագույն բրուտագործական արհեստանոցը՝ կավամանների պատրաստման տեխնոլոգիական բոլոր գործընթացներով և բրուտի հաստոցը՝ դուրզը:

Լորուտի ձորում՝ Լորուտ գետի աջափնյա թեք, խորդուբորդ տարածքում, կաթնամշակման գործարան կառուցելու նպատակով շենքի հիմքեր փորելու ժամանակ, անգիտության պատճառով, բուլդուզերով քանդվել և ամբողջովին ավերվել էր բրոնզեդարյան մի նշանավոր հուշարձան, որն իր նշանակությամբ կարելի է համեմատել համընդհանուր ճանաչման արժանացած Շենգավիթի բրոնզեդարյան մշակույթի հետ:

Ուսումնասիրությունները սկսեցինք հուշարձանի այն հատվածից, որը համեմատաբար քիչ էր տուժել ավերածությունից և որը գտնվում էր քանդած և այնտեղ լցված հողի տակ:


1,5 մետր լիցքի հողը հեռացնելուց հետո, պեղահատվածի վերին կամ հյուսիսային կողմում, բացվեցին շինության պատաշարի մնացորդներ: Ըստ որում՝ այն բաղկացած էր երկու շերտից: Վերին շերտում բացվեց կանոնավոր շարվածքով անկյունապատ, իսկ դրա տակ՝ 0,5 մ խորության մեջ, հողի շերտ, որում կային վաղ բրոնզի դարին բնորոշ խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնց մի մասը պատված էր բաց շագանակագույն անգորբայով, սև և շագանակագույն փայլաներկով, իսկ մի մասն էլ ուներ վարդագույն աստառ:

Անշուշտ, նշված շինությունը եղել է բնակարան, որն, ինչպես պարզվեց, կառուցվել էր ավելի վաղ ժամանակների շինության ավերակների վրա:

Վերը նշված կառույցի քարե պատերի և հողակույտի շերտի տակից հաշված՝ 25 սմ խորության մեջ բացվեց 5-10 սմ հաստությամբ կավի շերտի մնացորդ,

որից 60-65 սմ խորության մեջ՝ պատաշարի մնացորդներ, շուրջ 53 մ² մակերեսի վրա: Այդ հատվածը, մինչև վերջին շերտի ստորին խավը՝ մայր հողը, պեղելուց հետո պարզվեց, որ այն՝ չորս առանձին, մեկը մյուսի հետ կապված բաժանմունք ունեցող ավելի հին կառույց է, յուրաքանչյուր բաժանմունքը 13 մ² մակերեսով:

Առաջին բաժանմունքում գտնվեցին մեծ քանակությամբ հում կավի, մոտ 50 սմ հաստությամբ կույտեր, դրանց հետ նաև տարբեր մեծությամբ ու հաստությամբ, չթրծված, տարբեր զարդանոտիվների, ջարդված կավամանների բեկորներ, ինչպես նաև մեկ հատ *կիսապատրաստ* (կիսաֆաբրիկատ), ընդգծված երեք սահուն անցումներով գավաթ **Նկ. 1բ**: Այդ գավաթն առայժմ եզակի գտածո է ամբողջ բրոնզեդարյան նյութերում և ակնառու վկայություն է, որ մ.թ.ա. III հազարամյակի սկզբից Հայկական լեռնաշխարհում գործածվել է բրոնզի դուրզը, հակառակ այն պնդումների, որ բրոնզի հաստոցը հանդես է եկել մ.թ.ա. II հազարամյակում:



Նկ. 1

Կիսապատրաստ գավաթի հետ հայտնաբերվեց նաև բրոնզի հաստոցի քարե սկավառակաձև մասը, սակայն կոտրված: Դա այն մասն է, որի վրա է դրվում կավախմորը և համապատասխան ձևավորման ենթարկվում:

Երկրորդ բաժանմունքում ուշագրավը քարե կլոր պատերով թրծման վառարանն էր, որից մնացած պատերի բարձրությունը 65 սմ էր, տրամագիծը՝ 1,20 մետր: Վառարանի հատակը սալահատակված էր և լիքն էր մոխրի 20 սմ հաստությամբ շերտով: Ընդհանրապես այդ շինության հատակն ամբողջովին պատված էր մոխրով, տեղ-տեղ՝ մոխրախառն ածխի կտորներով: Մեր կարծիքով մոխիրը և ածուխը օգտագործվել են կավախմորին խառնելու կամ խեցանոթներին գույն տալու համար: Վառարանի հատակին և շուրջը կային տարատեսակ կավաման-

ների բեկորներ, երկու հատ ամբողջական, մուգ շագանակագույն փայլաներկով կավաման, ոսկրե սրածայր գործիքներ և քարե կոկիչ:

Վառարանում հայտնաբերվեցին նաև օդամղիչ անցք և 3-5 սմ տրամագծով խողովակաձև ծխնելույզներ: Բացի այդ, վառարանի ներսի կողմում կային դուրս ցցված սալ քարեր, որոնց վրա թրծվել է կավամանը:

Երրորդ բաժանմունքում բացվեց էլիպսաձև 1,2 մետր երկարությամբ, 40 սմ լայնությամբ և 34 սմ խորությամբ մի տաշտականման փոս-հարմարանք, որի պատերը և հատակը կավից էին, տեղ-տեղ երևում էր վառված կավի հետքերը: Հատակը պատված էր մոխրի հաստ շերտով: Այդ հարմարանքի հյուսիսակողմը՝ կառույցի հետևի ճակատապատի մոտ, կային դեպի վեր՝ ուղղահայաց դիրքով, դեռևս կիսով չափ անվնաս մնացած կավե խողովակաձև, 5-10 սմ տրամագծով անցքեր, կամ հարմար է դրանց անվանել՝ ծխնելույզներ: Այդ հարմարանքի՝ քուրայի, հարավակողմը, նույն շերտում, հողը շատ թույլ էր, հավանաբար այնտեղ փոս է եղել, որում դրվել է փուքսը և որից օդամղիչով օդ է մղվել քուրայի մեջ և գործարկել ծխաթրծման կամ փայլաներկման վառարանը: Նրա մեջ կողքի ընկած կար մեկ հատ սահուն անցումներով փոքրիկ, բաց շագանակագույն կճուճ, սակայն կեսը՝ մուգ սև փայլաներկ ստացած: Սև փայլն առաջացել էր մրաշերտերով պատելուց: Այդ վառարան-քուրան եղել է փակ ձևի, կավամանները կավախմորից պատրաստելուց հետո դրվել են դրա մեջ՝ թանձր ծխով սև փայլաներկ տալու համար: Այստեղ նկատվեցին նաև տարբեր հնարքներով կավամանների դրսի և ներսի կողմից տարբեր գունային երանգ տալու գործընթացները:


Նշված ծխաթրծման և փայլաներկման հնոցի բաժանմունքից գտնվեցին վեց ամբողջական, լավ թրծված խեցանոթներ և պաշտամունքային կրակօջախի խոշոր բեկորներ, որոնք ներսի կողմից ունեին ռադիալ դուրս ցցված ելուստներ, ինչպիսին ամբողջական ձևով հայտնաբերվեց այդտեղից մոտ 100 մ հեռավորության վրա /**Նկ. 2**/:



Նկ. 2

Չորրորդ բաժանմունքը կանոնավոր պատերի կառույցի էր նման, որն ուներ երեք պատ: Կողապատերը հարավային կողմում նեղացնելով՝ 2 մետր բացվածք էր թողնված, որը կարող էր ծառայել որպես մուտքի դուռ: Ըստ երևույթին՝ չորրորդ բաժանմունքը ծառայել է որպես պատրաստի արտադրանքի պահեստ, որում գտնվեցին մեկ փոքր, մեկ մեծ կավանոթ և խեցեղենի բազմաթիվ բեկորներ:

Այսպիսով՝ պարզվեց, որ հայտնաբերված շինությունը եղել է մ.թ.ա. III հազարամյակի սկզբներին վերաբերող բրուտագործական արհեստանոց, որպիսին առաջին անգամ է հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհում /Նկ. 3/:



Նկ. 3

Արհեստանոցի առաջին բաժանմունքում պատրաստել են կավանոթները, չորացրել արևի տակ կամ ստվերում, հատուկ գործիքներով /քարե, ոսկրե, փայտե/ կատարել պահանջվող նախշազարդումը, որոնք մեծամասամբ իմաստակիր-խորհրդանշաններ են: Երկրորդ բաժանմունքում՝ կավամանները գունաներկել և թրծել են բարձր ջերմաստիճանի տակ, որն ստացվել է օդամղիչ հարմարանքի՝ փուքսի միջոցով: Երրորդ բաժանմունքում կատարվել է ծխաթրծում, փայլաներկում՝ ստանալով պատրաստի արտադրանքը: Չորրորդ բաժանմունքը ծառայել է որպես պատրաստի արտադրանքի պահեստ:

ГОНЧАРНЫЙ КРУТ И ГОНЧАРНАЯ МАСТЕРСКАЯ ЛОРУТА

В. В. Аветян

На территории Армении в с. Лорут области Лори впервые нами были найдены гончарный круг и гончарная мастерская со всеми технологическими отделами. На том же месте найдены предметы и материалы, а также остатки чистого зерна. Обнаруженный материал относится к раннебронзовому периоду (III тыс. д. н. э.).

POTTER'S WHEEL AND POTTERY WORKSHOP OF LORUT

V. V. Avetyan

On the territory of Lori region in Armenia, for the first time we found a potter's wheel and pottery workshop with all the technological departments referring to the early bronze age (3rd millenium B.C.). In the same place some objects and materials were found, as well as remains of the clean grain.

ԼՐԱՇԵՆԻ ԶՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ

ԳՊՀ պրոֆեսոր

«Իսկ Գեղամը... գնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները՝ Գեղարքունի, ինչպես նաև կոչվում է ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեզ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իբրև ծառա և նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արևելք մինչև մի դաշտ, որտեղ Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով ահագին շառաչունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և աշխարհը իր անունով կոչում է Սյունիք»:

Այս կարևոր հիշատակությունը, որը քաղվել է պատմահայր Մովսես Խորենացու «Յայոց պատմություն»-ից, ունի պատմական արժանահավատ հիմք, որը հաստատվում է բազմաթիվ հուշարձանների, սեպագիր արձանագրությունների ու այլևայլ կոթողների տվյալներով:

Գեղամա և Սյունիքի լեռներից հայտնաբերված հազարավոր ժայռապատկերները, ջրի, պտղաբերության, առատության խորհրդանիշ համարվող «վիշապաքար» կոթողները նույնպես այդ են վկայում:

1983 թվականի աշնանը Գեղամա լեռների Գեղ լեռան դիմաց, նորերս Աղավնասար կոչված լեռնաբազուկի թեք լանջին, հայտնաբերվեցին դեմքերով դեպի արևելք և հարավ նայող, ամբողջական ժայռաբեկորներից կերտված երկու մարդու հսկա կիսանդրիներ: Թեև հազարամյակների ընթացքում բնության քայքայիչ ուժը իր կնիքն է դրել դրանց վրա, սակայն բավականաչափ ընդգծված նկատելի են աղեղնաձև հոնքեր, հեռուն բևեռված աչքեր, բեղ ու մորուք, կլոր սաղավարտ և այլ մանրամասներ: Նախնական ուսումնասիրությունների հիման վրա այն միտքն է հայտնվել, որ դրանցից արևելահայաց դեմքովը կարող է լինել Սիսակը, իսկ հյուսիսահայացը՝ Գեղամ նահապետը:

Գեղամ նահապետին վերագրվող տապանաքար կա Նորատուսի հին գերեզմանոցի նշանավոր խաչքարերի մեջ, վերջինս թեև ուշ շրջանի, միջնադարի տապանաքար է, բայց կարևորն այն է, որ ժողովուրդը ավանդաբար պահպանել է